ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«28» 11 2023 թ.
№ ՊՄՍՊ-ԳԳՀ-1661

«ՁՀԳ» ԲԲԸ (ՀՎՀՀ 02800056) տնօրեն
Ա. Հարությունյանին
հասցե՝ ՀՀ, ք. Զարենցավան, Եսայան 2
էլ. հասցե՝ info@cmtm.am
հեռ. +374-22-64-27-97

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՁՀԳ» ԲԲ ընկերության միջև 14.03.2023թ. կնքված N ՄԱԾՁԲ-23-4-5 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2023թ.-ի I-ից IV-րդ եռամսյակների ընթացքում, բայց ոչ ուշ քան 12.12.2023թ. պետք է մատուցեր Պայմանագրի 3-րդ չափաբաժնով սահմանված, 91 200 000 ՀՀ դրամ առավելագույն գումարի չափով վերականգնման և սպասարկման ծառայություններ, որոնք չեն մատուցվել և Ձեր ընկերությունը 18.10.2023թ. ելք №010 գրությամբ հայտնել է, որ հնարավորություն չունի մինչև 2023թ.-ի տարեվերջ կատարելու N ՄԱԾՁԲ-23-4-5 գնման պայմանագրով ստանձնած պարտավորությունները Պայմանագրի 3-րդ չափաբաժնի մասով, 91 200 000 ՀՀ դրամի չափով:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.2 և 2.1.3 կետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. նոյեմբերի 28-ին միակողմանի մասնակի՝ նշված չափաբաժնի մասով, լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ՁՀԳ» ԲԲ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 456 000 ՀՀ դրամ՝ որպես տուգանք՝ Պայմանագրի 5.2 կետի համաձայն:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am